ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2021 թ.

№ 12 (1076)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 56-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԵԿԴԱՐՅԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

21-րդ դարն աննախադեպ մարտահրավերների ժամանակաշրջան է, պատերազմի հետևանքների ու համաճարակի առկայության պայմաններում բազում մտահոգություններով լի կյանքի անհանգիստ ընթացք: Աշխարհաքաղաքական տարբեր իրողությունների համատեքստում անհանգստանալու շատ բան կա… Միաժամանակ յուրաքանչյուրիս մեջ ամեն վայրկյան վերարժևորվում է մեր երկրի ներկայի ու ապագայի հանդեպ պատասխանատվության գիտակցությունը, որը մղում է լավատեսության, ամրացնում պայքարելու կամքն ու ոգին՝ հանուն հայրենիքի առաջընթացի:

Թեև շատ դժվար ժամանակներ ենք ապրում. Կովիդ-19 համաճարակը փոխել է բոլորիս կյանքը, բոլորիս դարձրել զգուշավոր ու համակերպվող: Կարելի է մեր կյանքը գնահատել համաճարակից առաջ և համաճարակից հետո, պատերազմից առաջ և պատերազմից հետո… Համալսարանն էլ այս պատերազմում ունեցավ բազմաթիվ զոհեր, համաճարակի պատճառով՝ աշխատակիցների մահեր:

Համալսարանը 2022 թվականի նոյեմբերին կբոլորի իր գործունեության մեկ դարը. 100 տարին պատմություն է, ձեռքբերումներ, կենսագրություն, աշխատանքի ոճ, սերունդների հարափոփոխ ընթացք, նորովի աշխատելու, նորովի հպարտանալու ևս մեկ առիթ, որը պետք է ուժ տա, դառնա աշխատանքային նոր ձեռքբերումների շարժառիթ:

Պետք է նորովի գնահատել կյանքը, արժևորել ամեն օրը, օրվա յուրաքանչյուր պահը, աշխատանքը դարձնել նպատակ՝ ի նպաստ մանկավարժական կադրեր պատրաստող, լավագույն ավանդույթներ ունեցող համալսարանի, որը կրում է մեծ լուսավորիչ և առաջադիմության ջատագով Խաչատուր Աբովյանի անունը, նաև հանուն մեր չքնաղագեղ երկրի՝ Հայաստան աշխարհի զարգացման ու բարօրության:

Մանկավարժական համալսարանում շարունակվում են COVID-19 համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումները

Մանկավարժական համալսարանում շարունակվում են COVID-19 համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումները. բուհի Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի նախաձեռնությամբ այս անգամ ևս պրոֆեսորադասախոսական կազմի համար անցկացվեց տեղեկատվական սեմինար:

Մոր և մանկան առողջության պահպանման ԳՀԿ բժիշկ-համաճարակաբան, ԵՊԲՀ համաճարակաբանության ամբիոնի դոցենտ, բժշկական գիտությունների դոկտոր Մերի Տեր-Ստեփանյանը հանդիպման ընթացքում անդրադարձավ վիրուսի տարածմանը, վարակման հայաստանյան թվերին, դեպքերի կտրուկ աճին, մահվան ելքերին, ինչպես նաև խոսեց պատվաստվելու անհրաժեշտության մասին:

Վերջինս նկատեց՝ մեր երկիրն այսօր գտնվում է վարակի 4-րդ ալիքի գագաթնակետում, արձանագրված մահերի թվով էլ գերազանցում ենք պատերազմի ժամանակ կորոնավիրուսով պայմանավորված մահվան ելքերին.սա մտահոգվելու լուրջ առիթ է:

Համաճարակաբանը ներկաներին հորդորեց զերծ մնալ ապատեղեկատվությունից, չտրվել հակապատվաստումային շարժ-

➤2

Անվանի պրոֆեսորներին ընդունեց ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետը կազմակերպել է հանրային դասախոսություններ՝ արտասահմանյան հանրահռչակ պրոֆեսորների մասնակցությամբ:

Հոկտեմբերի 18-ին Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը Մանկավարժական համալսարանում հանդես եկավ «Մտորումներ Հայաստանի Առաջին Հանրապետության մասին» թեմայով դասախոսությամբ, իսկ ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հայկական բաժնի վարիչ, Կոլումբիայի համալսարանի Մերձավոր Արևելքի, Հարավային Ասիայի և Աֆրիկայի հետազոտությունների բաժնի դասախոս, պրոֆեսոր Խաչիկ Մուրադյանը ներկայացրեց «Վերապրելու պայքարը Մեծ եղեռնի համակենտրոնացման ճամբարներում» վերտառությամբ դասախոսությունը:

Պրոֆեսորները Մանկավարժական համալսարանում էին ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանի հրավերով:

Անվանի պրոֆեսորներին ընդունեց ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը:

«ՀՊՄՀ 100-ամյակին ընդառաջ անչափ կարևորում և ակնկալում եմ հանդիպումներ այնպիսի երախտավորների

հետ, որոնք մեծ ներդրում ունեն հայ իրականության մեջ: Ձեզ նման երախտավորների դասախոսություններին ներկա գտնվելը մեծ պատիվ է մեր համալսարանի դասախոսների և ուսանողների համար»,-ասաց Ա. Խոեցյանը:

Ռեկտորի պաշտոնակատարը խոսեց համալսարանում հոբելյանին ընդառաջ իրականացվելիք բարեփոխումների և նոր ծրագրերի իրականացման տեսլականի մասին՝ այդ գործում ընդգծելով անվանի ու մեծ ճանաչում ունեցող մարդկանց ուղղորդումներն ու դերակատարությունը:

Հյուրերը խոսեցին այցի շրջանակում իրենց առաքելության մասին:

Ռիչարդ Հովհաննիսյանն ասաց, թե ինչ դժվարությամբ է համաձայնվել գալ Հայաստան, բայց ի վերջո հետպատերազմյան ընկճվածությունը տեղի է տվել. «Ի վերջո պետք է ինչ-որ բան փոխվի մեր կյանքում, պետք է հավատալ և վստահել այս սերնդին, նաև օգնել, որ չլքեն հայրենիքը, մնան Հայաստանում»:

Պրոֆեսորը լիահույս է՝ երիտասարդները ոգի ու կամք ունեն, որպեսզի մնան հայրենիքում:

ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հայկական բաժնի վարիչ, Կոլումբիայի համալսարանի Մերձավոր Արևելքի, Հարավային Ասիայի և Աֆրիկայի հետազոտությունների բաժնի դասախոս, պրոֆեսոր Խաչիկ Մուրադյանն իր ուրախությունը հայտնեց ռեկտորի մոտ հյուրընկալվելու առթիվ և ասաց, որ սա հետպատերազմյան իր առաջին այցն է Հայաստան: Նա խոսեց բոլորին համակած տագնապների մասին, բայց վստահեցրեց՝ ինքը լավատես է և համոզված է, որ այս սերունդը իր բաղձանքների տեսլականը կիրականացնի:

«Մեր բուհը դասական համալսարան չէ, ունի ընդգծված ուղղություն՝ դա մանկավարժությունն է, և մեզնից, մեր պատրաստած կադրերից է կախված, թե ինչպիսին կլինի Հայաստանի ապագան: Ահա ինչու մենք պետք է ամեն ինչ անենք, որ մեր ուսանողը լավ իմանա իր պատմությունը,-ասաց ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը և հավելեց,-բուհը լավ ներուժ ունի, իսկ համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետը՝ նաև լավ ավանդույթներ ու կապեր, որ առաջիկայում համագործակցության տարբեր եզրեր են գտնելու՝ հայրենանպաստ նպատակադրությամբ և ի շահ Մանկավարժական համալսարանի:

Իսկ հայ ինքնությանը նվիրված մարդիկ մեզ ուժ են տալիս, որպեսզի մենք լավատես լինենք ու առաջ նայենք»:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Գիտելիքներն ու բանաձևերը սոսկ առիթներ են, անհրաժեշտ է փոխել բովանդակությունը»

Մանկավարժական համալսարանում անցկացվեց մաթեմատիկայի հիմնախնդիրներին նվիրված միջազգային գիտաժողով՝ մասնակցությամբ ՌԴ-ի, Արցախի և Հայաստանի տարբեր բուհերից, ինչպես նաև դպրոցներից հրավիրված ուսուցիչների:

Ռեկտորի պաշտոնակատար, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոեցյանը շնորհավորեց բոլորին գիտաժողովի բացման առթիվ՝ հատուկ ընդգծելով բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցման կարևորությունը բուհերում և հատկապես Մանկավարժական համալսարանում:

«Մաթեմատիկական գիտաժողովն ունի պատմություն. այն անց է կացվում արդեն իններորդ անգամ և ամեն տարի իրականացնում է իր առաքելությունը: Բացի գիտակրթականից, այն ունի նաև դաստիարակչական նշանակություն՝ գիտության պրոպագանդումը»,-ասաց Ա. Խոեցյանը:

«Որպես ուսուցիչներ պատրաստող առաջնային օղակ՝ հատկապես Մանկավարժական համալսարանը պարտավոր է այս երևույթի հանդեպ ունենա հետևողական վերաբերմունք, թույլ չտա, որ միտումը խորանա. դպրոցը սպասում է ֆիզիկայի, մաթեմատիկայի, կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության բնագավառների ուսուցիչների: Գիտության այս բնագավառներում բուհն ունեցել է լուրջ ավանդույթներ՝ ի դեմս այն գիտնականների, որոնք մինչ օրս էլ դասավանդում են ՀՊՄՀ-ում»,-ասաց Աշոտ Խոեցյանը:

Մաթեմատիկական միջազգային գիտաժողովն ամեն տարի անց է կացվում մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Միքայելյանի նախաձեռնությամբ: Նրա կարծիքով՝ գիտաժողովի շնորհիվ մաթեմատիկական կրթությունը համակողմանի դիտարկման է արժանանում՝ ուսուցման և դաստիարակության տեսանկյունից: Նա կարևորեց այն փաստը, որ ամեն տարի կազմակերպվող գիտաժողովը հնարավորություն է տալիս լսել արտասահմանցի գործընկերների արժեքավոր դիտարկումները, սակայն իր ափսոսանքն է հայտնում մասնագետների ընդգրկման շրջանակի հնարավորության բացակայության համար:

Նա մասնակիցներին մաղթեց արդյունավետ ու հաջող աշխատանք՝ հույսով, որ ակտիվ երկխոսության արդյունքում կգտնվեն մի շարք հարցերի պատասխաններ:

Պլենար նիստին ելույթ ունեցավ նաև ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Ղազարյանը, որը ներկայացրեց «Հարմոնիկ շարքերի որոշ կիրառությունները ֆիզիկայում» զեկուցումը: Կարևորելով ֆիզիկա-մաթեմատիկա միջառարկայական կապը՝ զեկուցողն ընդգծեց՝ առանց մաթեմատիկայի դժվար է դասավանդել ֆիզիկան, այնինչ ծրագրային անհամապատասխանությունը առաջ է բերում մի շարք դժվարություններ. «Ֆիզիկոսներն ամենատարբեր հնարքներով փորձում են հաղթահարել դրանք: Վստահ եմ՝ համագործակցությունն օգտակար կլինի երկուստեք»:

Գիտաժողովի արտասահմանցի մասնակցիներից շատերն իրենց զեկույցները ներկայացրին առցանց ձևաչափով՝ հույս հայտնելով, որ տեսակապի միջոցով գիտաժողովը կծառայի իր նպատակին:

Մոսկվայի պետական համալսարանի ակադեմիկոս Ալեքսեյ Սեմյոնովը տեսակապով ներկայացրեց «Մաթեմատիկական կրթության ապագան» խորագրով զեկուցումը: Նա շեշտեց, որ «վաղը աշխարհն ավելի թվայնացված կլինի, քան այսօր և որ պետք է հարմարվել նրա ռիթմին: Դպրոցը կպահպանվի միայն այն դեպքում, եթե կարողանա հաղթահարել իր և շրջակա միջավայրի միջև գտնվող թվային անդունդը:

Մենք գիտենք, որ մաթեմատիկան է ընկած համակարգչի և թվային տեխնոլոգիաների հիմքում»:

Զեկուցողն անդրադարձավ մաթեմատիկական կրթության մերօրյա նպատակներին՝ ինչ ենք ուզում սովորեցնել երեխաներին, ներկա իրավիճակին և փաստեց, որ վերոհիշյալ նպատակներին հասնելու համար դեռևս ցածր աստիճանի վրա ենք:

Ա. Լ. Սեմյոնովը ներկայացրեց մի շարք ուղիներ՝ նպատակներին հասնելու համար՝ ինչպես փոխել ներկա իրավիճակը, կարևորելով քննությունների ընթացքում երեխաներին և ուսուցիչներին թվային տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունից չզրկելը:

Նա կարևորեց դպրոցներում 1980-ականներից մուտք գործած «Ինֆորմատիկա» առարկան՝ ասելով, որ ծրագրավորումը երկրորդ գրագիտությունն է: Նաև խոսեց մաթեմատիկան և ինֆորմատիկան տարրական դպրոցներում իրականացնելու, «Թվային աշխարհ» ծրագրի մասին, մատնանշեց արդյունավետ կրթության ուղիները թվային հենքի վրա:

Մանկավարժական գիտությունների դոկտոր Մանուկ Մկրտչյանն էլ միջազգային գիտաժողովին ներկայացրեց «Մաթեմատիկան որպես հանրակրթական առարկա. հիմնական մոտեցումներն ու իրականացման հիմնախնդիրները» թեման: Վերջինս նկատեց, որ գիտաժողովի շրջանակներում իր ելույթներում մշտապես հետևողականորեն առաջ է մղում այն միտքը, որ մաթեմատիկական առարկաների բովանդակությունն ու ուսուցման կազմակերպման ձևն արմատապես պետք է փոփոխվի. «Ձևական փոփոխությունների կարիք չկա. պետք է փոփոխել նպատակաուղղվածությունը, մեթոդները՝ անհատական մոտեցումը առարկայի համար դարձնելով կարևոր նախապայման և պարտադիր սկզբունք: Երեխաները շատ տարբեր են, ունեն իրենց ներքին առանձնահատկությունը, բայց բոլորն էլ ընդունակ են, միայն թե նրանց որակական հատկությունների զարգացման համար պետք է մշակել անհատական մոտեցում: Երբ մենք դիտարկում ենք հանրակրթության խնդիրը, նշանակում է՝ դիտարկում ենք այն, թե ինչը պետք է պարտադիր լինի բոլորի համար, պարտադիր, ոչ թե ըստ ընդունակությունների: Այստեղ է որ առաջ է գալիս այն թեզը, որ գիտելիքներն ու բանաձևերը սոսկ առիթներ են և անհրաժեշտ է փոխել հիմնական բաղադրիչը՝ բովանդակությունը»:

Մանուկ Մկրտչյանը կարևորեց նմանատիպ գիտաժողովների անցկացումը, նշելով, որ դրանց ամենամյա լինելն անգնահատելի արժեք ունի. հնչում են նոր տեսակետներ, ծնվում են նոր մտքեր, որի առաջին շահառուն հենց ուսանողն է»:

Ելույթ ունեցավ Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Վադիմ Գրինշկուն, ով կարևորեց իր մասնակցությունը գիտաժողովին:

Պրոֆեսորի ղեկավարած կառույցը զբաղվում է այն խնդրով, թե ինչպես սովորեցնել նորագույն տեխնոլոգիաների կիրառության ժամանակ: Նա խոսեց նաև անհատական կրթական հետագծերի համար անհրաժեշտ թվային գործիքների, ուսումնական նյութերի հիերարխիկ հեռահաղորդակցության բազայի մասին, անդրադառնալով նաև ուսումնական նյութերի նախագծման ալգորիթմին:

Նույն համալսարանի պրոֆեսոր Օլգա Զասլավսկայան էլ խոսեց մաթեմատիկա-ինֆորմատիկա միջառարկայական կապերի մասին, անդրադարձավ այն հարցին՝ ինչպես կրթական համակարգի կարիքներից ելնելով ընտրել ճիշտ գործիքներն ու բովանդակությունը, որ ուսանողները կարողանան այդ մեթոդները կիրառել դասարանում կամ տանը:

Գիտաժողովի շրջանակներում մասնակիցներն անդրադարձան միջին դպրոցում մաթեմատիկական մտածողության ձևավորման խնդրին, մտավոր գործունեության ընթացքում մտածողության և ներքին խոսքի փոխհարաբերություններին, բնագիտամաթեմատիկական և հումանիտար մասնագիտական ուղղվածությամբ ուսանողների արժեհամակարգի առանձնահատկություններին և այլն:

«Մաթեմատիկական կրթություն» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովն անդրադարձավ հիմնախնդիրներին՝ առաջարկելով մաթեմատիկական կրթության ժամանակակից բարեփոխումներին ուղղված տարբեր լուծումներ:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Մանկավարժական համալսարանում շարունակվում են COVID-19 համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումները

➢1 ման քարոզներին, լինել զգոն և գիտակցաբար մոտենալ խնդրի լուծմանը. «Պատվաստվածության ընդգրկվածությամբ Հայաստանը տարածաշրջանում ունի վատագույն ցուցանիշը. սա խոսում է մի շարք խնդիրների, այդ թվում՝ մեր բնակչության կրթական ցածր մակարդակի մասին: Պատվաստման միջոցով հնարավոր կլիներ կանխել մահվան ելքերը, այնինչ դա չարվեց, ինչը նաև բժիշկների թերացումն էր: Անհրաժեշտ էր առավել լավ իրազեկել բնակչությանը, ընդհուպ դիմելով վարչարարական միջոցների»:

Մերի Տեր-Ստեփանյանը հույս հայտնեց, որ հաստատված դեպքերը, մահվան ելքերը կստիպեն հասարակությանն առավել շրջահայց լինել, մտածել պատվաստանյութերի արդյունավետության և դրանց շնորհիվ հետագա բարդացումներից խուսափելու մասին:

Հանդիպման ընթացքում Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր Նարինե Սահակյանը նկատեց՝ բուհը պատշաճ կատարում է ՀՀ Առողջապահության նախարարության վերջին հրամանը.այդ մասին է վկայում նաև պատվաստվածների և պշռ հետազոտվածների վերաբերյալ վիճակագրությունը:

Ծավալվեց շահագրգիռ քննարկում, եղավ հարց ու պատասխան:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

ԼՍԵՑԻՆ ՌԻՉԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի հրավերով հոկտեմբերի 18-ին Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը Մանկավարժական համալսարանում հանդես եկավ «Մտորումներ Հայաստանի Առաջին Հանրապետության մասին» թեմայով դասախոսությամբ: Պրոֆեսորի դասախոսությունն ավելի շուտ անկեղծ զրույց էր լսարանում ներկա դասախոսների և ուսանողների հետ. Հայաստանի Առաջին Հանրապետության շուրջ իր մտորումները ներկայացնելու ընթացքում հանրահռչակ պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը նաև պատմեց հայերենին տիրապետելու իր ջանքերի, նպատակների ու դրանց իրականացման մասին:

Երբ ավարտեց Կալիֆորնիայի պետական համալսարանը, որևէ համալսարան չկար, որը հայագիտական ամբիոն ունենար կամ որտեղ դասավանդվեին հայագիտական առարկաներ: Ուսուցչի կոչում ստացավ ու որոշեց աշխատելու փոխարեն հայերեն սովորել: Նավով ճամփորդեց դեպի հայաշատ Բեյրութ, առաջին այցելությունն էլ նպատակային էր՝ վարժարան, ուր ծանոթացավ Սիմոն Վրացյանի հետ:

Վերադառնալով Ամերիկա՝ որոշում է զբաղվել հայոց պատմությամբ. ընտրում է Ռուսաց և Միջին Արևելքի, ապրանքում էլ՝ Հայաստանի պատմությունը:

1960-ականներին արդեն դոկտորի կոչում ստացած պատմաբանը դասավանդում էր Լոս Անջելեսի համալսարանի պատմության ֆակուլտետում: Գիտական աշխատանքը Հայաստանի Առաջին Հանրապետության մասին էր:

«Երբ ուսումնասիրեցի իմ երկրի պատմությունը, տեսա որ դա ոչ թե հեղափոխական սերունդների պատմությունն է, այլ ամենաանպաստ ժամանակաշրջանը՝ եղեռն, գաղթականներ...»:

Բանախոսն անդրադարձավ Հայոց ազգային խորհրդին, որը հիմնված էր Թիֆլիսում, և թե ինչպես հայության մայրաքաղաք դարձած Թիֆլիսից հայությունը վերադարձավ այն ժամանակվա փոքրիկ ու փոշոտ գյուղաքաղաք Երևան՝ այդ փոքր տարածքը հռչակելով մայրաքաղաք:

«Այս սերունդը հերոսական սերունդ էր, որ թողնելով իր ապահով կյանքը Թիֆլիսում, Երևանում սկսեց ինչոր բան ստեղծել ոչնչից: Աննկարագրելի ծանր պայմաններում, հարյուր հազարավոր գաղթականների առկայությամբ, վարչապետ Հովհաննես Քաջազնունին փորձում էր Երևանի մեջ հիմնել պետություն ցարական և հայ

չինովնիկների հետ բանակցելով»:

Պատմաբանի կարծիքով՝ եթե Արևմուտքը իր խոստումը կատարեր՝ պիտի ստեղծվեր միացյալ Հայաստան՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանի միացումով:

Առաջին կառավարության ղեկավարները տոգորված էին ժողովրդավարությամբ, եվրոպական առաջադեմ գաղափարներով, կար առաջընթացի ու զարգացման ձգտումը, որը, սակայն տեղի էր տալիս իրականության ու դժվարին պայմանների առաջ. «Նվիրյալ սերունդ էր, կարիքները շատ էին, պայմանները՝ դժոխային: Բայց երկուսուկես տարվա ընթացքում եղան բարեփոխումներ, նախարարություններում փորձում էին լեզուն դարձնել հայերեն:

Արդարադատությունը Հայաստանում ցարական կառավարության տարիներին անարդարության դատավարություն էր, ժողովուրդը չէր վստահում, դատերը ռուսերեն լեզվով էին՝ անհասկանալի գյուղացիների համար: 1920 թվականին Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց երդվյալ ատենակալների դատարանը. զավեշտալին այն էր, որ հայ փաստաբանները հայերեն բառապաշար չունեին: Բայց մղումը կար, առաջադիմությունը կար:

Հատկապես դժվար էր զինվորական նախարարության վիճակը, ուր ռուսական ռազմական ակադեմիաներ ավարտած սպաները բոլորովին չգիտեին հայերեն: Պետք էր և՛ ոգին, և լեզուն հայերեն դարձնել: Շատերի համար խորթ էր մեր ազգային գաղափարախոսությունը»: Այդ հանրապետությունը սկիզբն էր: Մենք 30 տարի անկախ ենք, բայց տակավին տկարություններ ու թերություններ կան»:

Ռիչարդ Հովհաննիսյանը հանգամանորեն խոսեց ստեղծված իրավիճակի, դրա պատճառների ու հետևանքների, ինչպես նաև տարվող քաղաքականության մասին, համեմատական զուգահեռներ անցկացրեց 1990-ականների Հայաստանի հետ, երբ մշակույթ կար, գրագիտություն կար, ակադեմիա, հաստատություններ, իսկ 1918 թվականին ոչինչ չկար:

«Ինչով էինք մեղավոր՝ չեմ կարող ասել: Դժբախտաբար հայերիս միակ հույսը՝ «միացյալ ազգային պետականությունը կախված էր արևմուտքից, որը բարյացակամ էր մեր հանդեպ խոսքով և նպաստ ուղարկելով, բայց ոչ քաղաքականությամբ: Խոստումները չիրականացվեցին տարբեր պատճառներով»:

Բանախոսը խոսեց Թուրքիայի և Ռուսաստանի քաղաքականության, ժամանակին տիրապետող հայ ազգային կուսակցությունների, մեր տարածքային կորուստների, «սպիտակների» ու «կարմիրների» պայքարի, սովետական կազմի մեջ մտնելու նախապատմությունների ու պատճառների շուրջ:

Հանդիպումն ավարտվեց մեր պատմության այդ շրջանի որոշ կնճռոտ հարցերի շուրջ հարց ու պատասխանով:

Տարբեր հարցերին ի պատասխան՝ պրոֆեսորն ասաց, որ «Դժբախտաբար նմանություններ կան 1920 թվականի և այսօրվա իրավիճակի միջև, քանի որ մեր խնդիրը միայն մեր հարևանի հետ չէ», իսկ դիվանագետների մասին խոսելիս՝ նկատեց, որ այն տարիներին ոչ թե ուժեղ դիվանագետներ, այլ ազգային գործիչներ ունեինք. նրանք ավելի ակտիվ էին, քան այսօրվա դիվանագետները»:

Հայերեն սովորելու ամենօրյա ջանքը նվիրում դարձրած ու Սիմոն Վրացյանի 500 էջանոց գիրքը կարդացած Ռիչարդ Հովհաննիսյանի մտորումներն Առաջին Հանրապետության ցավոտ խնդիրների շուրջ որքան մտահոգ, նույնքան լեցուն էին Հայաստանի ու Արցախի շուրջ ստեղծված մերօրյա տագնապներով: Այնուամենայնիվ նա ուսանողներին հորդորեց՝ համոզված եմ, որ լավ կսովորեք և կզարգացնեք այս երկիրը:

«Վերապրելու պայքարը Մեծ եղեռնի համակենտրոնացման ճամբարներում»

ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հայկական բաժնի վարիչ, Կոլումբիայի համալսարանի Մերձավոր Արևելքի, Հարավային Ասիայի և Աֆրիկայի հետազոտությունների բաժնի դասախոս, պրոֆեսոր Խաչիկ Մուրադյանը հոկտեմբերի 18-ին Մանկավարժական համալսարանում հանդես եկավ «Վերապրելու պայքարը Մեծ եղեռնի համակենտրոնացման ճամբարներում» վերտառությամբ դասախոսությամբ:

Պրոֆեսորը նույն վերնագրով գիրք է տպագրել, որտեղ խոսվում է Թուրքիայի հայաջինջ քաղաքականության արդյունքում Հայոց եղեռնից մազապուրծ գաղթականների առաջին հանգրվանի՝ փախստականների համակենտրոնացման ճամբարների մասին Սիրիայի և Դեր Զորի միջև գտնվող տարածքում:

«Եղեռնի մասին խոսելիս հաճախ են օգտագործում Դեր Զոր անունն իբրև հոմանիշ,-ասաց պրոֆեսորը:- Այդ մասին վկայում են պատմական հուշագրությունները, տարբեր աղբյուրներ: Ցավոք, տարիներ շարունակ պատմաբանները Եղեռնի մասին խոսելիս կամ գրելիս հիմնականում հայերին ներկայացրել են զոհի կարգավիճակով՝ անտեսելով տարբեր երկրների միսիոներների և հայ մեծահարուստների՝ եղեռնից փրկված ու ճամբարներում հանգրվանած հայերի փրկությանը միտված լայնածավալ աշխատանքը»:

Պրոֆեսոր Խաչիկ Մուրադյանն իր դասախոսության մեջ անդրադարձավ հենց այդ խնդրին՝ էկրանին ցուցադրելով Արամ Անտոնյանի՝ Սիրիա-Դեր Զոր աշխարհագրական տարածքի և այնտեղ տեղակայված հայերի համակենտրոնացման ճամբարների քարտեզը, այդ տարիներից պահպանված վավերագրական մի շարք փաստաթղթեր՝ մարդկանց անուններ, օգնության ստացականներ և ժամանակի իրադարձություններ մասին վկայող այլ փաստեր:

Թե ինչու 1915-1916 թվականների մասին պատմագրության մեջ վերոհիշյալ հարցի մասին տեղեկություններ չկան, բանախոսը մատնանշեց մի շարք պատճառներ, երբ շեշտը հիմնականում դրվել է թուրքական ուրացումի քաղաքականության վրա, որոշ դեպքերում դրա ազդեցության ներքո հայկական ցեղասպանության որոշ

նյութեր կտրվել են արևմտյան աղբյուրներից, Դեր Զորում կան անկյուններ, որոնք փակ են դիտորդների համար և այլն:

Պատմաբանները ավելի շատ գրել են այն մասին, որ 1,5 մլն հայ Թուրքիայի կողմից տարագրվել է, բնաջնջվել: Այստեղ է, որ անտեսվել է այն փաստը, որ հայերը մի կողմից ենթարկվել են չարի կենտրոնի, մյուս կողմից՝ փրկության:

Միայն բնաջնջման քաղաքականությանն անդրադառնալը պրոֆեսորը համարում է պատմաբանների կողմից ոչ ճիշտ մոտեցում: Նա հանգամանորեն լսարանում ներկա գտնվողներին ներկայացրեց Սիրիայի և Դեր Զորի միջև համակենտրոնացման ճամբարներում գտնվող հայերի կյանքը հնարավորինս փրկելու, նրանց տարբեր ձևերով ու միջոցներով ճամբարներից հանելու, ինչպես նաև նյութական օգնություն ցուցաբերելու բազմաթիվ օրինակներ ու փաստեր, ինչը արվել է թուրք ոստիկանների դաժան ու աչալուրջ հսկողության պայմաններում: Մինչև այժմ էլ Հալեպի եկեղեցիներում պահպանվում են 1915 թվականի օգնության ստացականներ:

Սիրիան առաջին այն վայրը դարձավ, ուր հաստատվեցին բնաջնջումից փրկված հայերը, և Հալեպում շուրջ 10 հազար հայերից կազմված հայկական գաղութ կազմավորվեց: Հենց Հալեպում էլ ստեղծվեցին առաջին հանձնախմբերը՝ գաղթականներին օգնություն ցուցաբերելու համար:

Պրոֆեսորը հանգամանորեն խոսեց նաև այն մասին, թե ինչպես են թուրքերը հալածել հայ գաղթականներին օժանդակող հանձնախմբերում գործող մարդկանց, և դիմադրության այդ մեծ ցանցը, որ ստեղծվել էր գաղթականներին օժանդակելու համար, ստիպված անցավ ընդհատակյա գործունեության:

Կոլումբիայի համալսարանի դասախոս հայազգի Խաչիկ Մուրադյանը համոզված է, որ ճիշտ չէ շեշտադրել միայն ցեղասպանության ընթացքի վայրագությունները՝ չներկայացնելով հայերի պայքարը:

Օրական 500 հայ էր մեռնում այդ ճամբարներում սովից, ցրտից ու բռնությունից, բայց որքան մարդ էլ փրկվել է դիմադրության ու պայքարի համար գործող ցանցի կամավորների ջանքերի շնորհիվ:

Պատմությունը երբեք չպետք է մոռանա, որ Թուրքիայի կողմից հայերը ենթարկվել են տեղահանության, ցեղասպանության և բնաջնջման, սակայն, մյուս կողմից, պատմագրությունը պետք է անդրադառնա այն գործունեությանը, որ եղել են նվիրյալ հայեր, որոնք մեծ գումարներ են ներդրել իրենց հայրենակիցների կյանքերը փրկելու համար: Դեր Զորի Հայկական կաթողիկե եկեղեցին, տարբեր կազմակերպություններ, անհատներ լծվել էին հայերի փրկության գործին, անգամ ասորիներն ու արաբներն էին իրենց տներում թաքցնում հայերին: Նրանցից շատերն սպանվել են, բայց կան հայկական խոսուն աղբյուրներ:

Ամփոփելով իր դասախոսությունը՝ Խաչիկ Մուրադյանն ասաց. «Ես Կոլումբիայի համալսարանում իմ ուսանողներին ասում եմ, որ ցեղասպանությունը վերապրածների սերունդներից է կախված ապագան: Ի՞նչ կլինի ցեղասպանվածների հաջորդ սերունդների ապագան՝ կախված է յուրաքանչյուրից: Պետք է վերջ դնել այս երևույթներին ցանկացած գնով ու ցանկացած միջոցներով»:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ավելիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՍԵՐԲԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԲԵԼԳՐԱԴՈՒՄ

Մովսես Խորենացու համաշխարհային պատմագրության մեջ բացառիկ արժեք ունեցող «Հայոց պատմություն» կոթողային աշխատությունը թարգմանվել է նաև սերբերեն: Սա կարևոր մշակութային իրադարձություն է հայ և սերբ բարեկամ ու բախտակից ժողովուրդների կյանքում:

Նման կարևորագույն ձեռնարկն իրականացվել է սերբ ժողովրդին անսահման նվիրված դուստր, գրող, թարգմանիչ, արվեստագետ Վեսնա Պեշիչի և Հայաստանում Սերբիայի պատվավոր հյուպատոս Բաբկեն Սիմոնյանի եռանդուն ջանքերով:

Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքի շնորհանդեսին մասնակցելու համար Հայաստանից հրավիրվել էին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ավելիտա Դոլուխանյանը, որը Խորենացու պատմության մասնագիտական առաջաբանի հեղինակն է, նաև Երևան քաղաքի թանգարանի փոխտնօրեն Լուսինե Ամիրջանյանը:

Բաբկեն Սիմոնյանը հսկայական ջանքեր է գործադրում հայ-սերբական գրական և մշակութային կապերն ամրապնդելու գործում: Նա սերբերենին տիրապետում է մայրենիի մակարդակով և տաղանդավոր թարգմանություններ է կատարում սերբերենից հայերեն, հայերենից սերբերեն: Դրան հատկապես նպաստում է նրա քաջահմուտ բանաստեղծ լինելն ու բանաստեղծական հանգին բնատուր տիրապետելը:

Խորենացու «Հայոց պատմություն» գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ շքեղ պալատի դահլիճում, զարդարված թարմ ծաղիկներով ու Հայաստանի Հանրապետության դրոշով: Հանդիսության սկզբում և վերջում՝ հյուրասիրության հատվածում, հնչում էին Շառլ Ազնավուրի երգերը: Այդ շքեղությունն, անշուշտ, ապահովել էր Հայաստանի դեսպանը՝ Աշոտ Հովակիմյանը, որն առաջինը հանդես եկավ բացման խոսքով: Հավաքվածներին ջերմորեն ողջունեց Վեսնա Պեշիչը, որի «Պեշիչ և որդիներ» հրատարակչությանն ենք պարտական գրքի թարգմանության և հրատարակման համար: Հիանալի սերբերենով ելույթ ունեցավ Բաբկեն Սիմոնյանը, որը խոսեց թարգմանության ընթացքում իր կատարած դերի մասին, այնուհետև խոսեց թարգմանության առաջաբանի հեղինակ Ա. Դոլուխանյանը, և ամփոփման խոսքով հանդես եկավ Աշոտ Մելքոնյանը, որի խոսքին դահլիճը արձագանքեց բուռն ծափահարություններով:

Ուշագրավ էր, որ սկզբում երիտասարդ ու գեղեցիկ սերբ դերասանուհին թատերականացված ձևով հատված ներկայացրեց «Հայկ և Բել» առասպելից:

Ողջ երեկոն ընթացավ հայ և սերբ մտավորականների անկեղծ ջերմության ու փոխըմբռման մթնոլորտում:

Վեսնա Պեշիչը և Բաբկեն Սիմոնյանը այնպես էին կազմակերպել, որ Երևանից ժամանած պաշտոնյաներ չկային: Մարդկային հոսքը չի դադարել դեպի «Եռաբլուր». երեք մտավորականները ծանոթանային Բելգրադի տեսարժան վայրերին, նաև մասնակցեին Հայաստանի մշակույթի օրերին Բելգրադում: Հոկտեմբերի 7-ին մասնակցեցինք միջազգային կինոփառատոնի, որի ժամանակ անվանի կինոբեմադրիչ Գարեգին Զաքոյանը ներկայացրեց Սերգեյ Փարաջանով հանճարին՝ դրվագներ պատմելով նրա կյանքից: Գորբաչովյան պերեստրոյկայի մասին Փարաջանովն ասել է. «Ես պերեստրոյկայի ցուցափեղկն եմ»: Նա ցուցադրեց իր գրքերը՝ նվիրված Փարաջանովին: Ի թիվս այլ ֆիլմերի՝ «Նամակներ բանտից», «Ավետյաց երկիր», «Նաղաշ Հովնաթան» և այլն, ցուցադրվեց նաև Փարաջանովի՝ հին Թիֆլիսին նվիրված ֆիլմը:

Մենք եղանք Բելգրադի հին ամրոցում, որտեղ տեսանք 17-18-րդ դարերի երեք հայկական գերեզմանաքարեր և մեկ 17-րդ դարի խաչքար: Շատ տպավորիչ էր, որ ընդամենը մի քանի տարի առաջ կառուցված Սուրբ Սավայի անվան շքեղաշուք տաճարի մետաղյա դռան վրա կար հայատառ մեծ արձանագրություն, որը դիմում էր առ Աստված: Այդ տաճարը Բալկանների ամենամեծ եկեղեցին է:

Բելգրադի հին ամրոցում կանգնեցված է «Հաղթանակ» հսկա արձանը, որը պատկերում է գեղեցիկ մերկ տղամարդու՝ մի ձեռքին սուրը, մյուս ձեռքին՝ խաղաղության աղավնին:

Դիտելով այդ արձանը՝ հիշեցի անմահ Թումանյանի՝ սերբ ժողովրդի մասին ասված հետևյալ խոսքերը. «Բոլոր սլավոն ժողովուրդների մեջ սերբերն ամենաազատատենչն են»:

Բաբկեն Սիմոնյանը մեզ հանդիպման տարավ Նորին սրբություն Սերբիայի պատրիարք Պորֆիրիի հետ: Վերջինս վարժ խոսում էր ռուսերեն և հիանալի գիտեր Հայաստանի անցյալ ու ներկա պատմությունը: Խոսեց ցեղասպանության մասին, ասաց, որ շատ է սիրում Ջիվան Գասպարյանի դուդուկի նվագը և հատկապես հայկական կոնյակը: Նա նաև զգուշացրեց աչալուրջ լինել հայ-թուրքական հարաբերություններում: Նրան ուրախություն պատճառեց Խորենացու «Հայոց պատմության» թարգմանությունը, որը Վեսնա Պեշիչը նվիրեց նրան:

Զարմանահրաշ էր Բելգրադի ծայրամասում գտնվող Գրքի թանգարանը, որն ուներ 15 սենյակներ: Հավաքածուն, իրոք, եզակի էր, և այն սկսել էին հավաքել Լազիչ ընտանիքի անդամները 1882 թվականից: Հավաքածուում կային Աֆրիկայի, Ասիայի, Եվրոպայի տարբեր երկրների հին ու նոր գրքեր: Հատկապես հետաքրքիր էին եթովպական ձեռագիր մատյանները, որոնց տառերը նման էին Մաշտոցյան այբուբենին:

Հայկական գրքերի բաժնում առանձին շարքով դրված էր Բաբկեն Սիմոնյանի հայերեն ու սերբերեն գրքերի հարուստ հավաքածուն: Ծխախոտի տուփի չափով գրադարակում կային հայ ժամանակակից հեղինակների՝ Պարույր Սևակ, Սիլվա Կապուտիկյան և ուրիշների մատնոցի չափ գրքերի հատորները: Գրադարանն ուներ չափազանց մեծ և չափազանց փոքր գրքերի հավաքածուներ, եզակի փաստաթղթեր, հրովարտակներ, ինչպես օրինակ Նապոլեոն Բոնապարտի մի հրովարտակը:

Եղանք նաև Բելգրադ քաղաքի թանգարանում, որը տեղավորված էր քաղաքի կենտրոնում գտնվող իշխանուհի Լյուբիցայի ապարանքում:

XIX դարասկզբին կառուցված ապարանքում որոշակի երևում էր արևելյան ու եվրոպական ոճերի խառնուրդը:

Երևան քաղաքի թանգարանի փոխտնօրեն Լուսինե Ամիրջանյանը Բելգրադ քաղաքի թանգարանի տնօրենի հետ պայմանավորվեց հետագա համագործակցության համար:

Չնայած Բելգրադում գտնվելու 6 օրերի ընթացքում ամեն օր անձրևը տեղում էր առանց կտրվելու, սակայն մեզ հյուրընկալողների ջերմությունը զգացնել չտվեց հայերի համար ոչ սովորական բնության այդ երևույթը:

Եղանք նաև Սերբիայի պատմության ազգային թանգարանում, որում պատմական ցուցանմուշներից բացի, առանձին սրահներում ներկայացված էին Սերբիայի հին և նոր մշակույթի նմուշները, ինչպես նաև եվրոպական նկարիչների, օրինակ, Պիկասոյի կտավները: Ազգային պատմական թանգարանի շենքը ճարտարապետական ուշագրավ կառույց էր:

Մեզ օդանավակայանում դիմավորեցին Բաբկեն Սիմոնյանը և «Համի ատելյեի» տնօրեն Զդրավկո Յովիչը, որոնք մեզ տարան ուղիղ իրենց ատելյե, ուր մի խումբ սերբ մտավորականների հետ եղավ առաջին ջերմ հանդիպումը և ընտիր հյուրասիրությունը: Մենք միանգամից մեզ զգացինք Հայաստանում՝ մեր տանը:

Գեղեցիկ քաղաք է Բելգրադը: Նախավերջին օրը Բելգրադի հեռուստատեսությունից հարցազրույց եղավ իմ և Աշոտ Մելքոնյանի հետ: Մենք պատմեցինք մեր տպավորությունների մասին: Հարցազրույցը վարում էր հայ ժողովրդի մեծ բարեկամ Վեսնա Պեշիչը, որը գիրք է գրում Հայաստանի ու հայերի մասին:

Ուսանողի օրագրից

«Հետհայացք դեպի սեպտեմբերի 27»

Կիրակի էր, բայց սովորության համաձայն՝ առավոտյան 8-ին չէի արթնացել, հիշում եմ, աչքերս բացելուն պես քույրս մտավ սենյակ. «Քնել ես, պատերազմ է»: 10 վայրկյան էր պետք սառչելու, ընկալելու համար ասածը, շարունակեց. «Ժամը 7-ից կրակում են, ու էս հերթական կրակոց չի, երկար ա տևելու»:

Քարացած կամ այնպես, ինչպես միշտ՝ անտարբեր, վերցրի հեռախոսս, որ տեսնեմ՝ ինչ է ասում քույրս: Ճիշտ էր... Կեսօրին հեռախոսիս զանգ եկավ, 097... սկսեցի դողալ, պատասխանեցի, պարզ լսվում էին կրակոցի ձայները, անգիր հիշում եմ՝ ինչ էի զգում: Ու ամբողջ պատերազմի ընթացքում այդ զգացումն եմ ունեցել, քարացած էի կամ ոչինչ չէի հասկանում, կամ հակառակը՝ շատ էր հասկացածս: Պատերազմի իրական լինելն ընկալեցի միայն այն ժամանակ, երբ ընկերներիցս մեկի անունը տեսա ցուցակում, հետո՝ երկրորդինը, երրորդինը... Իսկ այսօր, այդ դաժան դեպքից 1 տարի անց, համակերպված ապրում ենք, կամ ապրում ենք, որ համակերպվենք, չգիտեմ: Զգացմունքային ժամանակներից անցում կատարելով ներկայիս իրականությանը՝ մեզ մնում է միայն հիշել ու հարգել բոլոր նրանց, ովքեր կռվեցին, պայքարեցին, զոհվեցին:

Սեպտեմբերի 27-ին Հայաստանում և Արցախում հայտարարվեց լռության րոպե՝ ի հիշատակ 2020 թվականի 44-օրյա պատերազմում զոհվածների: Արցախի բոլոր եկեղեցիներում հոգեհանգստյան կարգ մատուցվեց, Մայր տաճարում ներկա էր նաև Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը, նրա առաջնորդությամբ երթ անցկացվեց դեպի Ստեփանակերտի հուշահամալիր՝ Եղբայրական գերեզմանատուն, որտեղ ամփոփված են Արցախյան պատերազմների զոհերի աճյունները: Միջոցառումներին Հայաստանից ժամանած պաշտոնյաներ չկային: Մարդկային հոսքը չի դադարել դեպի «Եռաբլուր». ծնողները, բարեկամները, հարազատները այցելում էին իրենց հերոսների շիրիմներին: «Եռաբլուր» զինվորական պանթեոն է այցելել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ առանց կառավարության անդամների: Այնուհետև, ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, ՀՀ պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանը, փոխվարչապետ Սուրեն Պապիկյանը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ իրենց հարգանքի տուրքն են մատուցել: Ադրբեջանում նույնպես անցկացվեց հիշատակի երթ նախագահ Իլհամ Ալիևը և նրա կինը՝ Մեհրիբան Ալիևան, մասնակցել են մայրաքաղաք Բաքվում ընթացող երթի, որից հետո Ալիևը դրեց Հայրենական պատերազմի հուշարձանի և Հաղթանակի թանգարանի հիմքերը: Ֆրանսիական հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Ադրբեջանի նախագահը մեկ անգամ ևս նշել է, որ ղարաբաղյան հիմնախնդիրը մեկընդմիշտ լուծված է: Դրա հետ մեկտեղ, Ալիևը հերքել է պնդումները, թե Ադրբեջանը տարածքային պահանջներ ունի Հայաստանից: Սակայն այս ամենին զուգահեռ սեպտեմբերի 28-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի մարզի Կութ գյուղի մարտական դիրքերի ուղղությամբ ադրբեջանական ԶՈՒ ստորաբաժանումների կողմից արձակված կրակոցից բազկի հատվածում հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, շարքային Գառնիկ Մնացականի Աբրահամյանը:

Հիշեցնենք, ըստ պաշտոնական տվյալների՝ հայկական կողմից 3 հազար 781 մարդ է զոհվել այս պատերազմում, որից 80-ը՝ քաղաքացիական անձ, մինչ օրս ադրբեջանական գերության մեջ են հայեր, վերադարձել են 108-ը, 253 անձ համարվում է անհետ կորած: 80 քաղաքացիական զոհերից 68-ը տղամարդիկ են, 12-ը՝ կանայք: 52 քաղաքացիական անձ սպանվել է բնակության վայրում, 15-ը՝ հասարակական վայրում, 11-ը՝ աշխատանքի վայրում, 1 հոգի՝ ադրբեջանական բանտում: Քաղաքացիական զոհերի թվում մեծամասնություն են կազմում 63 և ավելի տարիք ունեցող անձինք:

Սյուզաննա ԽԱՌԱՏՅԱՆ
ՀՊՄՀ լրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի
27.09.2021թ.

Հայ ինքնության քարտն ամեն հայի «անձնագիրն» է դառնալու,-

վստահեցնում են բարերարները

Հայ ինքնության քարտ (HayeID) շահույթ չհետապնդող կազմակերպությունը հայանպաստ գործունեություն է ծավալում Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Հոկտեմբերի 8-ին Երևանում կազմակերպությունը բացեց աշխատանքային գրասենյակ, որին ներկա էին տարբեր ոլորտի ներկայացուցիչներ, պաշտոնատար անձինք:

Կազմակերպությունը նպատակ ունի աշխարհի հայերի ներուժի միավորմամբ աջակցել

Հայաստանի ամենատարբեր ոլորտների զարգացմանը, «մեկ հարթակում շփումների, հարցումների ու հանրաքվեների միջոցով լսել նրանց կարծիքներն ու տեսակետները թե՛ աշխարհի հայերին հետաքրքրող ընդհանուր հարցերի, թե՛ տարբեր երկրներում հայկական համայնքների համար առանձնահատուկ հետաքրքրության առարկա հանդիսացող խնդիրների շուրջ»:

«Հայ ինքնության քարտը» հնարավորություն է տալիս HayeID ցանցի ներսում ստեղծել գործարար խմբեր, իսկ քարտատերերին՝ մասնակցել տարբեր բարեգործական ծրագրերի, ստանալ բիզնես զեղչեր: Տարբեր հնարավորություններ ընձեռող համաշխարհային ցանցի միջոցով փորձ կարվի նաև ստեղծել Սփյուռքի հայկական խորհրդարան:

Յուրաքանչյուր հայ իրեն պետք է զգա Հայկական աշխարհի լիիրավ քաղաքացի, Հայկական ինքնության քարտն ամեն հայի «անձնագիրն» է»,-ասում են գործարարները:

Ելույթ ունեցան կազմակերպության հոգաբարձուների խորհրդի անդամներ Հասմիկ Սարգսյանը և Ռազմիկ Ղարախանյանը:

Աշխատասենյակի բացմանը հրավիրված էր և ելույթ ունեցավ նաև ՀՊՄՀ ռեկտոր Աշոտ Խոեցյանը:

«Հայ ինքնության գաղափարը պետք է տարածվի ամենուր, Սփյուռքի հայերի նվիրվածությունը պետք է վարակի նաև Հայաստանում ապրող հայերին,- ողջունելով հայ բարերարների նախաձեռնությունը, ասաց ՀՊՄՀ ռեկտոր Աշոտ Խոեցյանը:- Շուտով իր 100-ամյակը կբոլորի Հայկական պետական մանկավարժական համալսարանը, որն զբաղվում է կրթության ոլորտի համար կադրեր պատրաստելով և որի հիմքում մշտապես եղել է հայ ինքնության ու հայրենասիրության գաղափարը, որը հայ ժողովրդի գոյատևման կարևորագույն նախապայմանն է»:

Ռեկտորը խորին շնորհակալություն հայտնեց բարերարներին, որոնք իրենց առաջին քայլերով արդեն ոգեշնչեցին և նախանշեցին համալսարանի հետ համագործակցության ուղիները:

Հավելենք, որ հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Լոս Անջելեսի Իրանահայ միության նախագահ Թոմիկ Ալեքսանյանը և HyeID կազմակերպության նախաձեռնող խմբի անդամ Ռազմիկ Ղարախանյանը նախորդ օրն այցելել էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, հանդիպել բուհի ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոեցյանին, ինչպես նաև այցելել Կուլտուրայի և Գեղարվեստական կրթության ֆակուլտետներ:

Կուլտուրայի ֆակուլտետում նրանք մասնակցեցին պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման ամբիոնի վարիչ Կարեն Գևորգյանի պարի փորձին, լսեցին Ա-րա Գևորգյանի ղեկավարած ամբիոնի նվագախմբի կատարումները, իսկ Գեղարվեստական կրթության ֆակուլտետում ծանոթացան բուհի դասախոսների և անվանի շրջանավարտների արվեստի ստեղծագործությունների բացառիկ թանգարանին:

ՄԵՐ «ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ»

Թեքեյան մշակութային միության նախաձեռնությամբ Թեքեյան կենտրոնում հոկտեմբերի 8-ին կայացավ հերթական՝ 27-րդ ամենամյա մրցանակաբաշխությունը:

Վահան Թեքեյան մշակութային միությունը հիմնադրվել է Բեյրութում 1947 թվականին, իսկ միջազգային մրցանակաբաշխությունն անցկացվում է 1991 թվականից: Տարիներ ի վեր «Վահան Թեքեյան» մրցանակին են արժանացել մշակույթի ու գիտության տարբեր ասպարեզների ավելի քան 100 նշանավոր գործիչներ, այդ թվում՝ բանաստեղծներ Սիլվա Կապուտիկյանը, Լյուդվիգ Դուրյանը, Հրաչյա Թամրազյանը, գեղանկարիչներ Վարուժան Վարդանյանը, Ռուբեն Աբովյանը, քանդակագործներ Էմիլ Գազազը, Լևոն Թոքմաջյանը, երաժիշտներ Օհան Դուրյանը, Տիգրան Մանսուրյանը, Ռուբեն Հախվերդյանը, Ջիվան Գասպարյանը, Կոնստանտին Օրբելյանը, դերասաններ Վարդան Պետրոսյանը, Երվանդ Մանարյանը, լրագրողներ Հակոբ Ավետիքյանը, Արթուր Բախտամյանը, գրողներ Լևոն Խեչոյանը, Սարգիս Վահագնը և այլոք:

Այս տարի մրցանակներ շնորհվեցին 6 անվանակարգում՝ Գրականություն, Հայագիտություն, Գեղարվեստական լուսանկարչություն, Կերպարվեստ, Լրագրություն և Թատերական արվեստ: Մրցույթին հայտ ներկայացրած 70 մասնակցից հանձնաժողովն ընտրել էր լավագույններին:

«Լրագրություն» անվանակարգում «Վահան Թեքեյան» մրցանակը շնորհվեց Մանկավարժական համալսարանի Լրատվության և հանրության հետ կապերի վարչության պետ Դիանա Մարկոսյանին՝ «Հաջողության բանաձև» հաղորդաշարի համար, որը հեռարձակվում է Ա Թիվի հեռուստաընկերության եթերով: Մրցանակը հանձնեց լրագրության մրցույթի հանձնաժողովի նախագահ, ՀՀ վաստակավոր լրագրող, «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Հակոբ Ավետիքյանը: Նա նախ իր զարմանքը հայտնեց, որ լրագրողների ներկա բազմազանության մեջ բավականին քիչ հայտեր են ստացվել, որից ընտրել են երկուսը՝ կենտրոնական Եվրոպան ներկայացնող և Պրահայում տպագրվող «Օրեր» ամսագրի գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանը և «Հաջողության բանաձև» հաղորդաշարը, որի խմբագիրն ու պրոդյուսերն է Դիանա Մարկոսյանը:

Հ. Ավետիքյանը Դիանա Մարկոսյանին բնութագրեց որպես լրագրության ասպարեզում բավականին մեծ ճանապարհ անցած «հին և հնագույն»՝ լավ իմաստով, ճանաչված և դասական լրագրող, ով ներկայացնում է մաքուր լրագրություն, դասական մոտեցում ցուցաբերում լրագրությանն ու հաղորդաշարին՝ նյութը ներկայացնելով առանց զարդարանքների: Արդեն մեկ տասնամյակ է, ինչ նա ղեկավարում է ՀՊՄՀ-ի համապատասխան ստորաբաժանման աշխատանքները, ունի դասավանդման մեծ փորձ:

Վերջինս տարբեր արվեստագետների մասին Դ. Մարկոսյանի պատրաստած հաղորդումները լրագրության ասպարեզում համարեց օրինակելի:

Հակոբ Ավետիքյանը նաև բարձր գնահատեց հաղորդաշարի ստեղծագործական խմբի «Ջնհալև արվեստում» ֆիլմը՝ որպես հաջողված նախագիծ, որը բացահայտում է կինոաշխարհում 1960-ականների հայ մշակույթի պատմության ոսկեդարի հետաքրքիր շերտերը:

«Շատ շնորհակալ եմ, այս մրցանակը պարտավորեցնող և պատասխանատու է, որովհետև մեզնից առաջ այնպիսի երախտավորներ են ստացել, նաև պարտավորեցնող է նրա համար, որ մրցանակն ստանում եմ մի մարդու ձեռքից, ով մշտապես կանգնած է եղել մեր երկրի լրագրության ակունքներում, կարելի է ասել մեր մամուլի ռահվիրաներից է»,-ասաց Դիանա Մարկոսյանը:

Նա նաև իր շնորհակալության խոսքն ուղղեց Մանկավարժական համալսարանի ղեկավարությանը, որ 6 տարի առաջ վստահեց, հավատաց իր ուժերին և վստահորեն ներդրում արեց, և հաղորդումը կայացավ:

«Այսօր մեր հաղորդաշարը հեռարձակվում է հանրապետության երեք տարբեր կողմնորոշում ունեցող հեռուստաալիքներով, ինչը նշանակում է, որ հեռուստաընկերությունները գնահատել են հաղորդման գիտակրթական բաղադրիչը»,- հավելեց հաղորդաշարի հեղինակը:

Եվ թերևս առանց թիմի ստեղծագործական աշխատանքի հաղթանակի բերկրանքը չէր լինի, եթե «Հաջողության բանաձև»-ում իրենց լավագույնս չդրսևորեին պրոֆեսիոնալներ ռեժիսոր Արտյոմ Աղասարյանը, օպերատոր Հրայր Սիրականյանը, մոնտաժող, ռեժիսոր Արթուր Փարսյանը և Դիանա Մարկոսյանի ուսանողուհին՝ հաղորդավար Սուսինա Խաչատրյանը: Թիմի կազմակերպված աշխատանքի արդյունքում է Դիանա Մարկոսյանը ներկայացրել իր և Մանկավարժական համալսարանի հաջողության բանաձևը:

Մյուս անվանակարգերում «Վահան Թեքեյան» մրցանակներ շնորհվեցին ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՊՄՀ-ի ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արմեն Էլբակյանին՝ «Թռիչք կկվի բնի վրայով» բեմադրության համար («Թատերական արվեստ» անվանակարգում), ՀՀ ժողովրդական նկարիչ Անատոլի Ավետյանին՝ «Երեբունի-Երևան-2800» ստեղծագործության համար («Կերպարվեստ» անվանակարգում), Արմեն Ենգոյանին՝ «Գյուղական էսքիզներ» շարքի և Ջավեն Խաչիկյանին՝ «Անվերնագիր պատերազմ» շարքի համար («Գեղարվեստական լուսանկարչություն» անվանակարգում), բանաստեղծ Արտավազդ Նազարյանին՝ «Արվարձան» և «Ուղեփակոց» բանաստեղծական ժողովածուների համար («Գրականություն» անվանակարգում), Արման Եղիազարյանին՝ «Աշոտ Գ Ողորմած թագավոր հայոց» ժողովածուի համար («Հայագիտություն» անվանակարգում):

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԱԶԷԶԷՆ ԱՄԵՐԻԿԱ ԵՒ... «ՍՓԻՒՌՔ» ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հոկտեմբերի 7-ին Խ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական համալսարանի «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնը հիւրընկալել էր վաստակաշատ մանկավարժ, գրող, Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց ամէնօրեայ վարժարանի երկարամեայ տնօրէն Զարմինէ Պողոսեանին:

Վաչէ Պարտիզունու ան. հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի տնօրէն պրոֆ. Սուրէն Դանիէլեանը, նախ, ներկայացրեց Զարմինէ Պողոսեանի անցած ճանապարհը՝ նկատելով, որ պատահական չէ, որ նա հենց այստեղ՝ Մանկավարժականում է. Զ. Պողոսեանն իր ողջ գիտակցական կեանքը նուիրել է սերունդներ կրթելու առաքելութեանը: Ս. Դանիէլեանն ընդգծեց, որ բազում մրցանակներ ստացած Զ. Պողոսեանն արժանացել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանին, որը նրա մանկավարժական գործունէութիւնն արժեւորող ամենաբարձր գնահատականն է: Նա նկատեց, որ Սփիւռքում ապրող եւ հայկական դպրոցում դասաւանդող ուսուցչի աշխատանքը կրկնակի բարդ է. դա ամէնօրեայ անդուլ պայքար է հայկական ինքնութեան, հայոց լեզուի, հայ երեխային հայ պահելու համար, եւ Զ. Պողոսեանը օտար մարտահրաւէրներից չընկրկող պայքարի առաջամարտիկներից է, հայ մշակոյթի համար անզիջում կռուող զինուոր. «Զարմինէ Պողոսեանի նման նուիրեալ մտաւորականների հետ հանդիպումները զօրացնում են նաեւ մեզ, գիտելիք եւ ուժ փոխանցում»,-յաւելեց նա: Իր խօսքի վերջում Ս. Դանիէլեանը հպարտութեամբ նշեց, որ «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի վերջին հրատարակութիւնը հենց Զարմինէ Պողոսեանի «Ազէզէն Ամերիկա» հատորն է, որի շնորհանդէսը տեղի ունեցաւ վերջերս Թէքէեան Մշակութային Միութիւնում:

Հայ նոր եւ նորագոյն գրականութեան ամբիոնի դոցենտ, «Ազէզէն Ամերիկա» գրքի խմբագիր Քնարիկ Աբրահամեանը խօսեց Զ. Պողոսեանի գրքի հիմնական շեշտադրումների մասին: Նա նկատեց, որ այստեղ Զ. Պողոսեանի մանկութիւնն է՝ Ազէզ գիւղաքաղաքից մինչեւ Ամերիկա ճգնող մարդու անցած ճանապարհը, ճակատագիրը: Չնայած գրողը երկար տարիներ Ամերիկայում է բնակւում, սակայն

Ազէզը շարունակում է ապրել. տարիների հեռուից յիշատակները չեն մոխրանում: Ծննդավայրը մնում է Զ. Պողոսեանին սնուցող երակը, որտեղից սկիզբ են առնում եւ ճիւղաւորւում են նրա կեանքի հիմնական դրուագները: Կեանքի ուրուագծումների այս կերպը մենք տեսել ենք Ա. Ծառուկեանի, Վ. Շուշանեանի, Գ. Մահարու, Ստ. Զօրեանի ստեղծագործութիւններում: Իր յուշագրական, հրապարակախօսական աշխատանքներում Զ. Պողոսեանը փորձում է երկխօսել նրանց հետ, նորից վերապրեցնել մեր գրական հին մթնոլորտը:

Քն. Աբրահամեանն ընդգծեց, որ բանասիրական բաժանմունքի ուսանողների համար այս հանդիպումը իւրատեսակ փորձառութիւն է, քանի որ նրանք կը ծանօթանան ե՛ւ սփիւռքահայ մանկավարժութեան առանձնայատկութիւններին, ե՛ւ այսօր արեւմտահայերէնով գրող եւ ապրող գրագէտի հետ:

Հետաքրքիր զեկոյցով հանդէս եկաւ բանասիրական բաժանմունքի 4-րդ լսարանի ուսանողուհի Աննա Կոստանեանը, իսկ Մագիստրատուրայի 2-րդ լսարանի ուսանողուհի Հայկանդուխտ Մարգարեանը գեղեցիկ անակնկալ էր պատրաստել հայկական պոեզիային անմնացորդ սիրահարուած Զ. Պողոսեանին: Նա կատարեց Սիլվա Կապուտիկեանի բանաստեղծութեան հիման վրայ գրուած «Ասում են թե» երգը: Զ. Պողոսեանի արցունքները առաւել քան խօսուն էին. անակնկալը ոչ միայն ստացուել էր, այլեւ՝ խորապէս յուզել:

Զ. Պողոսեանին իր ողջոյնի եւ շնորհակալական խօսքը յղեց նաեւ բանասիրական բաժանմունքի փոխդեկան, հայ նոր եւ նորագոյն գրականութեան ամբիոնի դոցենտ Նաիրա Խաչատրեանը: Նա խոստովանեց, որ չնայած իր մանկավարժական երկարամեայ փորձին՝ այս հանդիպման ընթացքում նոր բաներ սովորեց բազմափորձ եւ գիտակ մանկավարժից: Իր խօսքը Ն. Խաչատրեանն եզրափակեց Համօ Սահեանի բանաստեղծութեամբ՝ ներկաներին փոխանցելով մարդկանց նկատմամբ անսահման սիրով եւ հաւատով լցուած տաղանդաշատ բանաստեղծի պատգամը:

Հանդիպման աւարտին խօսք առաւ Զարմինէ Պողոսեանը: Նա, նախ, շնորհակալութիւն յայտնեց Ս. Դանիէլեանին նման ջերմ եւ մտերմիկ միջավայրում՝ «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնում, հանդիպումը կազմակերպելու համար: Գրքի հեղինակը յուզմունքով նշեց, որ նման զրոյցները, յիշատակներն են, որ ապրեցնում են իրեն, ստեղծագործելու եւ պայքարելու ուժ ու կորով տալիս: Ապա Զ. Պողոսեանը, իրեն յատուկ անմիջականութեամբ, ապագա ուսուցիչների հետ կիսուեց իր մանկավարժական հարուստ փորձով՝ մանրամասն ներկայացնելով Սփիւռքում գործող հայկական դպրոցների առջեւ ծառացած խնդիրները, մանկավարժական աշխատանքի իւրայատկութիւնները, որոնք էականօրէն տարբերւում են Հայաստանի կրթական փորձից: Հանդիպումը աւելի շատ անկեղծ զրոյց էր, բազմավաստակ ուսուցչի փորձի եւ գիտելիքի փոխանցումը ապագա ուսուցիչներին: Զ. Պողոսեանը խօսեց նաեւ մանկավարժական աշխատանքի դժուարութիւնների մասին. խոստովանեց, որ իր համար շատ ծանր էին արցախեան պատերազմի օրերը՝ լացի, յուսահատութեան, ցաւի եւ կորուստի օրեր էին ողջ հայութեան համար, սակայն մանկավարժը պէտք է տոկուն լինի, ցոյց չտայ իր յուսահատութիւնը, այլ ժպիտով եւ լաւատեսութեամբ պէտք է հաւատ ներշնչի ապագայի հանդէպ:

Դիմելով ուսանողներին՝ Սփիւռքում ապրող եւ սերունդներ կրթող ուսուցիչն ընդգծեց մի կարեւոր հանգամանք եւս. ամբողջ աշխարհում ցրուած հայութիւնը մէկ ամբողջութիւն է, եւ մանկավարժի սրբազան պարտքն է, իբրեւ մէկ ընդհանուր մարմին, հաստատուն պահել հայութեան ողնաշարը՝ անկախ այն հանգամանքից, թէ որտեղ ենք ապրում՝ Ազէզում, Պէյրութում, Լոս Անճելէսում, Նիւ Եորքում, թէ որեւէ այլ քաղաքում:

Ապա Զ. Պողոսեանը ներկաներին նուիրեց իր «Ազէզէն Ամերիկա» հատորից 30 օրինակ:

«Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի լրատուութիւն

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2018 թվականից մինչև օրս ՀՊՄՀ և ՌԴ «Սոեդինենիե» չտեսնող-չլսողների հիմնադրամի միջև կնքված պայմանագրի շրջանակներում Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը գիտամեթոդական, մանկավարժահոգեբանական ուղղություններով ակտիվ համագործակցություն է իրականացնում: Նշված ժամանակահատվածում ֆակուլտետում 2 մագիստրոսներ գիտական ղեկավարների հետ միասին մասնակցել են «Наставники и ученики» նախագծին և արդյունքում ռուս գործընկերների համաղեկավարությամբ պաշտպանել են մագիստրոսական ատենախոսությունը:

Համագործակցության շրջանակը փաստում է այն մասին, որ լայնորեն իրականացվող հոգեբանամանկավարժական մոտեցումները զարգացման բարդ և բազմակի խանգարումներ ունեցող անձանց հետ կիրառելի են նաև մեր երկրում, ինչն էլ առավել արդիական է համընդհանուր ներառականության պայմաններում:

Պետք է նշել, որ խնդիրների մեկնաբանումը ենթադրում է մանկավարժական գործիքակազմի կիրառում, որտեղ առավել քան կարևորվում է այդ անձանց սոցիալ- մշակութային, ազգային առանձնահատկություններն ու առաջարկվող գործիքակազմի արժեքը:

2021 թվականի հոկտեմբերի 7-11-ը Մոսկվայում ևս կայացավ «Սոեդինենիե» չտեսնող-չլսողների հիմնադրամ ակադեմիայի կողմից կազմակերպած «Science Slam» գիտական քննարկումը, որին մասնակցում էին ՀՊՄՀ հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Անուշ Ասլանյանը, գիտ. ղեկավար, մ.գ.թ., դոցենտ Թերեզա Ազատյանը, 2-րդ կուրսի մագիստրոս Լիդա Սեսաձեն և գիտ. ղեկավար մ.գ.թ., պրոֆեսոր Սիրանուշ Կարապետյանը:

Ներկայացվեց գիտական աշխատանքների ընթացքը, ակնկալվող արդյունքները, բարձրացվեցին բազում հարցեր, ինչպես նաև քննարկվեցին աշխատանքների հետագա ընթացքի կատարման եղանակները: Ծրագիրն առաջիկայում ենթադրում է համայնքային հետազոտությունների մոդելի ներդրում, միջազգայնացում՝ ՀՊՄՀ համագործակցության շրջանակներում:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ
Մանկավարժության և հոգեբանության ամբիոն

«Թատրոնի և կինոյի գործիքները փարբեր են, պետք է ամեն ինչ սկսել զրոյից՝ չփորձել նմանակել ինչ-որ մեկին»,-

ասում է Դավիթ ՀԱԿՈԲՅԱՆԸ

«Մինչ այսօր կասկածում եմ՝ արդյո՞ք ճիշտ մասնագիտություն եմ ընտրել, բայց այն միտքը, որ ես երջանիկ եմ, ստիպում է ինձ հավատալ՝ այո»:

ՀՊՄՀ երիտասարդ գրականագետների ակումբը համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի մասնաշենքի կարմիր դահլիճում կազմակերպել էր հանդիպում՝ թատրոնի և կինոյի դերասան Դավիթ Հակոբյանի հետ: Դերասանը հարց ու պատասխանի միջոցով շփվեց ուսանողների հետ, պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին ու կիսեց սեփական փորձը ապագա դերասանի մասնագիտությունն ընտրողների համար: Զրույցն ամբողջացնելով՝ նա զվարճալի դեպքեր պատմեց ուսանողական տարիներից: Թե ի՞նչը դրդեց դառնալ դերասան, Դավիթ Հակոբյանը պատասխանեց. «Ամեն ինչ շատ պատահական ստացվեց: Մի օր եղբայրս բռնեց ձեռքիցս ու տարավ գեղարվեստի դպրոց, վարպետներին ասելով՝ իմ եղբայրը մեծ դերասան է դառնալու, խնդրում եմ ուշադիր եղեք նրա հանդեպ: Սովորեցի, սակայն ռեժիսուրայի բաժին էի ուզում ընդունվել, հետո փոխեցի որոշումս: Նույնիսկ առաջին կուրսում ուզում էի կիսատ թողնել ուսումս, բայց ստացվեց այն, ինչ ստացվեց: Գուցե ուրիշ բանով պիտի զբաղվեի, չգիտեմ»:

«Եթե ոչ դերասան, ապա ո՞վ» հարցի ներքո Դավիթ Հակոբյանը մտաբերեց մի պատմություն ծառայության տարիներից. «Սովետական բանակում էի ծառայում, բայց ոչ թե զինված ուժերում, այլ շինարարական զորամասում: Մի օր պետք է փոխարինեի վաշտի գրագրին: Լինելով հայ, հայկական դպրոցն ավարտելով հանդերձ՝ ես պիտի ռուսերեն գրեի մի քանի օր: Նեղվում էի, որ կրում եմ ուրիշ երկրի զինվորի ուսադիրներ, ես հայ գեներալներ էի ուզում տեսնել, հայ զինվորներ: Երևի թե զինվորական կդառնայի»:

Ապագա դերասաններին խորհուրդները շատ էին, սակայն շեշտադրեց. «Պետք է ամեն ինչ սկսել զրոյից, չփորձել նմանակել ինչ-որ մեկին: Իսկական դերասան դառնալու համար պետք է աշխատեցնել մարմնի բոլոր մասերն ու մկանները, այդ ժամանակ էլ չի լինի ոչ մի խանգարող հանգամանք: Դերասանի գործիքն իր մարմինն է, ուրիշ ոչ մի բան»:

Դավիթ Հակոբյանը խոսեց նաև կինոյի և թատրոնի տարբերությունների մասին՝ ասելով. «Թատրոնում ես եմ որոշում ինչպես խաղալ, թատրոնում միայն ես եմ ու հանդիսատեսը, ես անկեղծ եմ իմ հանդիսատեսի հետ: Կինոյում ամեն վայրկյան դու կարող ես փոփոխության ենթարկվել, դադարներ ունենալ: Թատրոնում ոչ թե պետք է հույզերով ու հուզվելով խաղալ, այլ կարողանալ կառավարել դրանք: Դա հմտություն է: Կինոյում ես կարող եմ հուզվել, և դա շատ անգամ լավ է՝ դադար կվերցնեմ, կհանգստանամ, իսկ թատրոնում ես իրավունք չունեմ հուզվելու, ես չեմ կարող դադար վերցնել, միայն ես և հանդիսատեսն ենք»:

Դերասանն ուսանողներին տվեց պարտադիր ընթերցանության գրքերի ցանկ. «Որպես մշակույթի մարդ, հայ մարդ՝ դուք պարտավոր եք կարդալ Աստվածաշունչը, դա քարոզ չէ քրիստոնյա դառնալու համար, դա մեր պատմությունն է, ու մենք պարտավոր ենք ճանաչել ինքներս մեզ»: Նշեց նաև «Սասունցի Դավիթ» էպոսը, «Ռանչպարների կանչը», Սերվանտեսի «Դոն Կիխոտը»: Կինոէկրաններին նոր հայտնված «Սողոմոնի կանչը» ֆիլմում ազգությամբ թուրք խաղալուց Դավիթ Հակոբյանը չի նեղվել, ասում է՝ բարի թուրք էի: Վերջին հարցը «Կյանք ու կռիվ» ֆիլմի՝ «Սեր խոստովանելուց վախենում ես, կռիվ գնալուց՝ վախենում ես» արտահայտության ու դրվագի հետ էր կապված:

- Ինչպե՞ս կերտեցիք այդ պահին այդ կերպարը, քանի՞ անգամ նկարահանվեց: «Շատ հետաքրքիր ստացվեց, սկզբում ռեժիսոր Միհեր Մկրտչյանը կանչել էր զինվորականի դերի համար, սցենարը կարդալուց հետո ասացի. «Միհեր ջան, ցանկացած մարդու կարող էիք կանչել, ախր անելիք չունեմ էստեղ»: Հետո պապի տեքստը տվեց, հենց էդ դրվագը, ծիծաղս եկավ, որովհետև ես նույն ձևով եմ խոսում ուսանողներիս հետ, նույն բառերով: Իմ լեզվով էր գրված, ինձ պետք չէր խաղալ, ինձ ուղղակի բարկացնել էր պետք: Օրեր անցան, սրտի նոպա էի ունեցել, ու ինչ-որ մեկը Միհեր Մկրտչյանին ասել էր՝ Դավիթ Հակոբյանը սրտի խնդիր ունի: Այդ տեսարանի ժամանակ, Միհեր Մկրտչյանը շտապ օգնության սրտի խումբ է կանչում ինձնից գաղտնի: Ապահովության համար սպասում են ներքևում, որ ուր որ է վատանալու եմ խաղալուց հետո... իրոք, շատ բուռն տեսարան էր: Ես խնդրեցի մեկ կադրով նկարել, խաղացի վերջացրի ու տեսա անհանգիստ դեմքեր, դադար եղավ ու հնչեցին ծափահարություններ, մի քանիսն անգամ արտասվում էին: Շրջվեցի, Միհերին ասում եմ՝ լա՞վ էր, ասում է՝ ինչի՞ ես սենց հանգիստ, ու էսպես բոլորը կարծում էին, որ շտապ օգնության մեքենայով տեղափոխվելու եմ հիվանդանոց»:

Զրույցի վերջում, երիտասարդ գրականագետների ակումբի անդամները անակնկալ էին պատրաստել: Մեծ էկրանի վրա ցուցադրվեցին Դավիթ Հակոբյանի՝ ֆիլմերում կերտած կերպարներից դրվագներ ու հայացքներ, ապա դերասանին պատվոգիր հանձնեցին:

Դերասանի եզրափակիչ խորհուրդը ուսանողներին՝ հայի լեզվամտածողությունը պահելն է, քանզի դրանից թանկ բան չկա այսօր: Վերջում էլ հավելեց. «Մենք պետք ենք իրար, պետք ենք մեկմեկու, պետք ենք այստեղ»:

Լիլիթ ԱԵԵՄՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի Լրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանող

ԲԱՐԻ ԵՐԹ ՏԱՌԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Համալսարանական հիմնական դպրոցի առաջին դասարանցիների համար օրը և՛ սովորական էր, և՛ անսովոր, իսկ ինչո՞ւ.

...Որովհետև մինչև այսօր
Դաս ենք արել նկարներով:
Իսկ այսուհետ, երեխաներ,
Մեզ հյուր կգան բազում տառեր,
Որ դրանցով կարդանք, գրենք,
Ու գիտության դուռը բացենք:

1-ին «Ա» դասարանի դասվար Կարինե Չիբուխչյանի ղեկավարած դասարանի Ա տառի բացման դասը Մատենադարանի առջև կայացավ, ինչը խորհրդանշական էր փոքրիկների համար և ճանաչողական:

Փոքրիկներն ասմունքեցին դպրոցի ու դասի, գրքերի և ուսուցչի մասին, խոստացան, որ տառերը սովորելուց հետո կկարողանան բացել գիտելիքների դուռը:

Դասը «Ա» տառի մասին արևոտ էր և արևահամ. ամեն ինչ սկսվում ու ավարտվում էր Ա տառով. Փոքրիկները հանելուկներ ասացին՝ Ա-ով սկսվող պատասխանները գուշակելով, իսկ հետո. «Ավելացնենք նաև Աստված, Արարիչ, Ավետարան, Աստվածաշունչ բառերը, որոնք անկասկած. ա-ով են սկսվում, որովհետև մեր այբուբենը ստեղծվել է Աստծու կամքով և կախարդական զորություն ունի»:

Առաջին դասարանցիների թոթովախոս ասմունքի հիմքում մեր այբուբենի առաջին տառն էր, նրանով ոսկեզօծվող հայոց աշխարհը.

Ա-ով է սկսվում այբուբենը մեր,
Մեր հայոց լեզվի առաջին տառը,
Մեր Արաքս գետը, մեր Անին ավեր,
Եվ հայոց հրաշք Արարատ սարը:

Ապա աշակերտները վստահեցրին.

Դուք հայերեն տառեր սիրուն,
Այսօրվանից մերն եք հավետ,
Կյանքի բոլոր ճամփաներում
Պիտի միշտ էլ քայլենք ձեզ հետ:

«Սիրելի՛ երեխաներ, այսօր ձեզ համար մեծ տոն է: Հավատացած եմ, որ այն անջնջելի տպավորություն կթողնի ձեր հոգիներում և կհիշվի ամբողջ կյանքում: Այսօր դուք պատրաստվում եք մի խաղ-ճանապարհորդության՝ ուղևորվում եք անծանոթ տառերի երկիր: Բարի՛ մուտք ձեզ դեպի անծանոթ տառերի խորհրդավոր աշխարհ»,-իր աշակերտներին դիմեց դասվարը՝ վստահ, որ նրանք տառերով զինված՝ կմտնեն գիտելիքների կախարդական աշխարհ:

«Ա» տառի բացմանը նվիրված միջոցառումը եզրափակվեց երգ ու պարով և «Ա» տառաձև թխված բլիթների համտեսումով:

Բարի երթ, տառերի աշխարհում, սիրելի փոքրիկներ: Սիրեք Հայրենիքը, սիրեք Հայոց տառերը, որպեսզի մեծն Մաշտոցի այբուբենով կարողանաք ակոսել գիտելիքների ծովը և մեծանալ որպես իսկական հայրենասերներ:

«Ա» տառի բացման հանդես էր նաև 1-ին «բ» դասարանում: Դասվար Անի Սողոմոնյանի աշակերտներն աշնանային տերևներով ներս մտան ու տերևաթափի գեղեցիկ տեսարանով ազդարարեցին միջոցառման մուտքը: Նրանց ողջունեց դասվարը, մաղթեց լավ սովորել այբուբենը:

Փոքրիկներն ասմունքեցին, հայտնի բանաստեղծական տողերով փառաբանեցին Մեսրոպ Մաշտոցին.

Օ, մեծագույն Մեսրոպ Մաշտոց,
Մեր առաջին բացված դպրոց,
Ամեն գիրդ՝ լույսի ճրագ,
Մեզ հայ պահող անմա՞ր կրակ:

...Մաշտոցյան գրերի շնորհիվ մենք հաղթահարեցինք բազում փորձություններ, պահեցինք մեր երկիրը, մեր ոգին: Առաջին դասարանցիները երգեր ձոնեցին այբուբենին.

Տառերը պես-պես բացել են հանդես,
Տառերը մեր տունն են:
Միացիր դու մեզ ու երգիր մեզ հետ,
Մենք քեզ սիրում ենք, Հայոց Այբուբեն:

Նրանք փոքր են, բայց արդեն հասկանում են, որ զինվորներն են, որ հայոց լեզվի տերն են, որ տառերով են պաշտպանված.

Քեզ պաշտպանում ենք, մեզ
պաշտպանում եք,
Մենք զինվորներն ենք,
մեր լեզվի տերն ենք:

Ու նորից աշնանային տեսարան, մրգառատ աշուն, «Ա» տառով սկսվող ու չվերջացող գեղեցիկ բառերի ու բանաստեղծությունների շքեղաշուք շարք.

Ա-ն Արարատն է կարոտ կանգնած ու
Արցախն է արյուն դարձած
Ու արյան մեջ, թե կարոտի
Առավոտներ պիտի բացվեն...
Առավոտներ՝ հաղթանակի...

Միջոցառումը հայոց տառերին ու հայոց լեզվին ձոնված մի համապարփակ երգ էր, որ յուրաքանչյուր առաջին դասարանցի կպահի իր հոգում երկար, մյուս բոլոր տառերը սովորելու ընթացքի մեջ «Ա» տառը կփայլի ու կփայլատակի՝ ճանապարհ տալով մեսրոպյան մյուս տառերին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՄԵՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ՝ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ ԽՄԲՈՒՄ

ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ֆիզիկայի բաժնի մագիստրոս Վարդուհի Մկրտչյանը Բյուրականի աստղադիտարանի գիտահետազոտական խմբի անդամ է, որը վերջերս մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության պետական կոմիտեի հայտարարած դրամաշնորհային ծրագրերի մրցույթին:

7 անդամ ունեցող գիտահետազոտական խմբի ներկայացրած «Գալակտիկաների էվոլյուցիայի վաղ փուլերի բացահայտումն ակտիվ գալակտիկաների բազմալիքային ուսումնասիրության միջոցով» թեման արժանանացել է դրամաշնորհի:

Ի դեպ, ՀՊՄՀ մագիստրոս Վարդուհի Մկրտչյանը գիտահետազոտական խմբում ընդգրկված միակ ուսանողն է: Խմբի ղեկավարը Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանն է:

Վարդուհի Մկրտչյանը Մանկավարժական համալսարանում բազմիցս մասնակցել է աստղագիտությանը վերաբերող դասընթացների ու գիտաժողովների: Նա առանձնակի կարևորում է բուհի և Բյուրականի աստղադիտարանի համատեղ ձեռնարկները, որոնց շրջանակներում էլ մասնակցում է միջազգային դպրոցների և դասընթացների:

ՀՊՄՀ մագիստրոսը խոստովանում է՝ համալսարանը դարձել է ոլորտի և աստղագետների հետ ծանոթանալու յուրահատուկ օղակ, որը հնարավորություն է ընձեռում ոլորտին վերաբերող հարցերը քննարկել գիտական մակարդակներում:

Նշենք, որ ծրագիրը մեկնարկել է այս տարվա հոկտեմբերին՝ 5 տարի շարունակ դրամաշնորհ կտրամադրվի Բյուրականի աստղադիտարանի գիտահետազոտական խմբին:

Ամփոփիչ պրակտիկա

ԿԱՐՄԻՐ ՈՒ ՏԱՔ ՍԻՐՏ

...Իսկ աշխարհում
Երջանկությունն ավելի է
տարողունակ...
Պ. Սևակ

Վերջաբան գրելու կորով, ինչու չէ, նաև ունակություն է պետք մարդուն... Չի ստացվի, եթե ներսդ անընդհատ նորի, լուսաբացի, սկզբը տալու նորաթուխն է նստած... Ձեռքերդ կապված ես զգում, մտքերդ՝ մի ուղղությամբ շարժվող...

Ամփոփիչ պրակտիկա, արարմա՜ն ներդաշնակ ավարտ. նահանջել չգիտեմ այդ դաշտում, դառնում եմ ավելի զգացմունքային, ինչպես ինչ-որ բան ավարտին հասցրածները:

...Այս անգամ՝ ամփոփիչ պրակտիկայի ընթացքում, նորի ակնկալիքով իր գողտրիկ դռներն էր բացել Խաչատուր Աբովյանի անվան թիվ երկու դպրոցը...

Երբ արդեն զգում ես դպրոցի շունչը, հաջորդ քայլերի հերթն է գալիս՝ հանգիստ ու ներդաշն...

Ինձ բախտ վիճակվեց սկսելու «Երկնքից երեք խնձոր ընկավ» բաժինը: Շրջեցինք մեզ համար նորովի բացահայտած իններորդ մոլորակում՝ ինչու չէ նաև մի նոր հեքիաթասաց դառնալու ձգտումով ու հույսով: Մեր նոր մոլորակում հերոսները միանշանակ առաքինի կամ չարակամ չեն, իսկ նրանց արարքները անմիջապես ընդունելի կամ անքննարկելի չէին կարող լինել. մենք չունենք բացարձակ ճշմարտություններ...

Բովանդակության վերարտադրումը կայանում էր հստակ դերերի բաշխմամբ... Երեխաները պատրաստ էին այդ դերերը ստանձնելուն ու անկախ հեքիաթի հետագա զարգացումներից՝ վահան դառնալ գործողություններով չփայլող որևէ հերոսի...

Վերլուծում էին, սեփական կարծիք ձևավորում ցանկացած հարցի շուրջ ու վերջում հանգում ճշմարտության՝ ոչ գերագնահատելով կամ առավել ևս թերագնահատելով երևույթը...

Աստված ժողովրդի հետ խոսում էր առակներով, մեր աշակերտներն էլ խոսում էին առածներով, ասացվածքներով. առածների իսկական տեղատարափ էր սկսվում դասի ընթացքում:

Իրենց ընկալումների սահմաններում ամենաթանկ բանը անգին խաղաղությունն էր, անդավաճան ազատությունը, հայրենիքը, ընտանիքը, մայր հողը...

Ամեն ակնթարթ սովորելու և առողջ մրցակցելու «մոլուցքը» աշակերտների կարմիր ու տաք սրտում է. չես կարող քամու մեղմ լարերի կամ աննպատակ հովերով նրանց ձեռքը սեղմել:

Սեփական ձեռքերով «պատժի տետր» սահմանել, գծել ու վերնագրել հենց այդպես, եզակիներին, քաջերին է շնորհված: Բայց արի ու տես մեր աշակերտները, երբ սխալ էին անում, անցկացնում էին այդ տետրում՝ մեկը՝ թաքուն ու արագ, մեկը՝ հատուկ բոլորին ցույց տալով... Միևնույն ժամանակ բոլորի մտադրությունն էլ, նպատակն էլ նույնն էր՝ սխալն ընդունել, գիտակցել, ուղղել ու առաջ շարժվել: Ինքնուրույն էին, ազատ...

Իմ ուսուցիչը՝ վարպետը, արվեստանոցի կամ կրթօջախի հենասյունն է. անհնարին բառը նա ընդունել չի կարող, չի պատրաստվում: Երջանի՜կ մարդ եմ, երջանկության սեղանի առաջ նստած Սևակ եմ թերթում՝ բոլոր գործոնները կան, և մնում էր անընդհատ առաջ շարժվել՝ տարբեր մայրուղիներում հայտնվելու համար:

Հոգաչա՜փ շնորհակալ լինել ամենքին: Սրտի կծկումով ավարտել: Կարոտե՜լ անվերջ: Սիրե՜լ ու այդ սիրով նվիրվել, ապրել... Ի՞նչ է մնում մարդուն վերջում՝ գոնե՜ «փոխհատուցման» տարբերակով: Ինձ մնում է այս ոչ հռետորական հարցին պատասխանել և ինձ համար էլ ամենաթանկ բանն առանձնացնել... Ամեն մի վերջից հետո մարդուն մնում են միայն հուշեր, ստացած վառ տպավորություններ, ամենաթանկն էլ, երևի, հիշողություններ են անցյալից թրծված...

Եվ, այնուամենայնիվ, «միա՜յն սիրտն է սրատես, ու ամենակարևորը այդպես էլ աչքով չես տեսնի»...

ԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, բակալավր, 4-րդ կուրս

Մեր ուսանողը՝ բազկամարտի առաջնության հաղթող

Օրերս կայացավ Հանրապետական ուսանողական 22-րդ մարզական խաղերի բազկամարտի առաջնությունը, որին մասնակցում էր նաև Մանկավարժական համալսարանի 7 ուսանող:

75 կգ քաշային կարգում առաջին պատվավոր հորիզոնականը նվաճեց բուհի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ինֆորմատիկայի բաժնի 3-րդ կուրսի ուսանող Հովհաննես Բալյանը, որը նաև ղեկավարում է ֆակուլտետի սպորտի հանձնաժողովը:

Վերջինս ի սկզբանե «որոշել էր» հաղթել, և նրան հաջողվեց հաղթահարել ընթացքում հանդիպած բոլոր խոչընդոտները, ինչն էլ Հովհաննեսին դարձրեց հանրապետական առաջնության բազկամարտի մրցաձևի հաղթող:

«Հանձնաժողովն աշխատանքային երկար դադարից հետո սկսում է իր ակտիվ գործունեությունը. համոզված եմ՝ փոքրիկ հաղթանակները դառնալու են ուսանողական մեծ հաջողությունների սկիզբը»,- ասում է Հարություն Մկրտչյանն ու հավելում՝ նմանատիպ խաղերն ուսանողներին օգնում են հավատալ սեփական ուժերին, լինել առավել համախմբված, ստեղծել նոր միջավայր՝ ձեռք բերելով նոր ընկերներ:

Բազկամարտի առաջնության հաղթողը հավելեց, որ հաղթանակն իր համար մի նոր շարժառիթ դարձավ. առաջիկայում հենց այս ոլորտում կշարունակի ծավալել ակտիվ գործունեություն: Պետք է համախմբվել մի նպատակի շուրջ և առաջ շարժվել:

34-րդ ուսումնական տարվա մուտքը

ՌԴ-ում՝ ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում տեղի ունեցավ ավանդույթ դարձած 34-րդ (2021-2022 թթ.) ուսումնական տարվա բացումը:

Մասնակիցները հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգեցին 44-օրյա արցախյան պատերազմում արիաբար զոհվածների հիշատակը: Այնուհետև Հայաստանի հիմնով մեկնարկեց միջոցառման պաշտոնական մասը: Ողջույնի խոսքով հանդես եկան Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ դեսպանորդ, դեսպանության լիազոր նախարար Արսեն Առաքելյանը և ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար Գեղամ Ադամյանը, ովքեր իրենց խոսքով ներկաներին հորդորեցին՝ սովորել հայոց լեզուն, պատմությունը, պահպանել հայկական ավանդույթներն ու մշակույթը՝ ընդգծելով «Վերածնունդ» դպրոցի առաքելությունը հայեցի դաստիարակության գործում:

Այնուհետև իր հայրենասիրական խոսքն ուղղեց ներկաներին ՀՀ Պաշտպանության նախարարության զինծառայող, արցախյան վերջին պատերազմի մասնակից, փոխգնդապետ Սմբատ Քառյանը:

Շնորհակալական խոսքով ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն՝ մանկ. գիտ. թեկնածու տիկին Շողիկ Փահլևանյանը: Նա նաև շնորհավորեց Ուսուցչի օրվա առթիվ, այնուհետև էկրանին ցուցադրվեց դպրոցի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության մասին պատմող տեսաժապավենը:

Օրն ամփոփվեց «Վերածնունդ» դպրոցի սաների՝ հայրենիքին և ուսուցչին նվիրված գրական-երաժշտական գեղեցիկ կատարումներով:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 22.10.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ